

# Անմայրամուտ միջօրե

Եվ մի օր մանուկները կհարցնեն ծնողներին. «Ինչու՞ են մեր քաղաքի արևելքը բռնող սարը կոչում Կարենասար...»:

Ու ծնողները մի պահ կհիշեն Դարաչուխի սարը, որ նույն Քարաձունկ լեռն է, կհիշեն այդ սարի ու լեռնաշղթայի կատարներին եղած երբեմնի ճակատամարտերը, դրանց մասնակիցներին, Մարտունի քաղաքը պաշտպանելիս զոհվածներին ու Կարենին, ԿԱՐԵՆ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆԻՆ:

...88-ի կեսերին այդ սարը մարտունեցիների ու նրանց դեմ զինավառված թուրքերի համար համարյա ոչ մի նշանակություն չուներ. հայերը կարծում էին, որ ամիրանլարցի թուրքերը չէին կարող գալ ու դիրքավորվել: Բայց եղավ անակնկալ. ամիրանլարցիները ոչ միայն սարը շրջանցեցին, այլև եկան մինչև Գնորգավան տանող ճանապարհի ձախակողմյան բարձունքները ու սկսեցին կրակել ուղեկալից վերադարձող հերթափոխայինների վրա:

Քարաձունկ-Դարաչուխը դարձավ օրակարգի հարց: Մարտունու ինքնապաշտպանությունը գլխավորող գնդապետ Մարգարյանը վճռեց ինչ գնով էլ լինի, տիրանալ բարձունքին ու այնտեղ պաշտպանական հենակետեր դնել: Սկսվեցին կատաղի մարտերը Քարաձունկի համար:

Ամբողջ երկու-երեք օր ինքնապաշտպանության ջոկատները տարբեր կողմերից գրոհում էին բարձունքին բույն դրած թուրքերի վրա, բայց ապարդյուն:

Սակայն երրորդ օրը տղաները ճեղքեցին պաշտպանության օղակը ու մտան խրամատները: Թշնամին կորուստներ տալով ճողոպրեց դեպի Սերգունց սարն ու փափաստանամերձ կողմերը:

Քարաձունկը գրավողների մեջ էին Ուլուբաբյան եղբայրները՝ Մարատն ու Կարենը:

–Այս սարը միշտ պաշտպանելու ենք, – ասում էր Կարենը, – եթե սա ձեռքից թողնենք, Մարտունի քաղաքը հաշվիր մոխրակույտ, Խոնաշենի հովտի գյուղերը նույնպես:

Ու Քարաձունկ լեռան համար սահմանվեց ամենօրյա հերթապահություն-

...Քարաձունկի դիրքերի վրա բազում անգամ հարձակումներ եղան: Առաջինը մարտունեցիներն էին օգնության շտապում, նրանց հետ էր Կարենը: Իսկ ուր Կարենն էր, այնտեղ կարելի էր առանց շփոթվելու ու խուճապի կռվել:

Մասնակցել էր Խոջավենդի, Վեյսալլուի, Ղարադաղլուի մարտերին, ուր ասես, որ չէր եղել: Նաև Շահումյանում ու Մարտակերտում: Տասնյակ մարտերի մասնակից էր: Բայց հիմնականում Քարաձունկի բարձունքում էր, ուր եփ նայելիս սրտի չափ մարմնից մոտ երևում էին Մարտունի քաղաքը, նորակառույց տունը, ծնողաց հիշատակներն ու այդ նորակառույցի բակում խաղայող զավակները:

92-ի սեպտեմբերի 16-ին թուրքերը սկսեցին խոշորամասշտաբ գրոհ Մարտունու շրջանի ամբողջ սահմանի երկայնքով: Քարաձունկի լեռնաշղթան ծածկված էր հրետանու արկակոծությունից առաջացած ծխածածկույթով: Թշնամին լեռան քսան պաշտպանների վրա էր նետել խոշոր ուժեր. վեց տանկ և երկու հարյուրի չափ հետևակ: Տանկերից երեքը դիմահար կրակով խրամուղիներից չէին թողնում գլուխ հանել ոչ մի մարտիկ: Իսկ մյուս երեքը հետևակին գրոհով առաջնորդում էին դեպի բարձունք: Մարտիկները կռվում էին «Եթե Մարտունին է, նահանջի տեղ չկա» դաստիարակվածությամբ:

Կարեն Ուլուբաբյանը այդ մարտում կռվում էր գնդացրով, իսկ երբ տանկերից մեկը մոտեցավ խրամատաշարին, նա վազեց դեպի նռնականետը: Անցան րոպեներ: Տանկը բավականին մոտեցել էր: Հանկարծ որոտաց նռնականետն ու շիկացած արկը խրվեց տանկի կողը: Զրահը երերաց: Երկրորդ հարվածը ջնջեց ադրբեջանցու հույսն ու հավատը: Մյուս տանկերը գլուխները շուռ տվին: Տասնյակ զոհվածներ, վիրավորներ ու գերիներ թողնելով՝ թշնամին ճողոպրեց դեպի փափաստանի խորքերը:

Բայց հետապնդելիս տեղի ունեցավ անակնկալը: Դարանակալ փախստականը ինքնաձիգն ուղղեց Կարենի վրա: Դա Կարենի մղած վերջին մարտն էր:

Քարաձունկի պաշտպանը երերաց ու ընկավ: Միջօրեն թաթախվեց արյունով: Անմայրամուտ միջօրե...

Եվ եթե մի օր ձեր որդիները ձեզ հարցնեն. «Ինչու՞ է Մարտունու արևելյան կողմը բռնող սարը կոչվում Կարենասար», դուք իսկույն կհիշեք Կարեն Ուլուբաբյանին, մուշկապատյի տղային, որն ընկավ այդ սարի բարձունքում:

**Էռնեստ Եսայան**